

ՀԱՄԱՌՈՒՍ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՇԽԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՄԱԾԿԱԾ ՇՈՒԿԱԾ. — Մածկած շուկայի շենքը հանդիսանում է Երևանի ուշագրավ ու խոշոր նորակառուցքներից մեկը։ Այստեղ լրիվ ավարտված են շինարարական աշխատանքները։ Ներկայում շինարարների կողեկանիվ զբաղված է շուկայի բազմաթիվ բաժանմունքների ձևավորման ու սարքավորման աշխատանքներուն։

Ի՞նչ է իրենից ներկայացնում ծածկված շուկան։ Միայն երս հսկայական առևտուրական գլխավոր դաշտին գրավում է 2.300 քառ. մետր տարածություն։ Դաշտին ամբողջ երկարությամբ տեղավորված են տաճակ խանութներ, ներկորոդ գարկում տեղավորված են կաթնամթերքների և հատիկային մթերքների բաժինները։ Շենքի խորքում սարքավորվում է ընդարձակ դաշտի մասի և մասենի առևտուրի համար։ Շենքը պապառված է շուկային անհրաժեշտ բոլոր հարդարություններով՝ սառցարաններով, լարուատորիաներով, սանիտարական կետերով և այլն։ Շուկայի դաշտին հատակը իմանակարչական է, ճակատը զարդարված է հսկայական շուկունածույթով։

ԿՈՂՑԱԿԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ. — Կողցակի գործարանի կառուցումը մտնում է Երևանի զարգացման ու բարեկարգման 15-ամյա ծրագրի մեջ։ Գործարանի կառուցումը մոտենում է իր ավարտմանը։ Հրազդանի աջ ափին, բարձր բլրի վրա բարձրացել են մեր երկրի ամենամեծ գինեկործական ձեռնարկություններից մեջ։ Կողցակի գործարանի շենքերը։

Գլխավոր շենքում արդեն ամբարտվել են շինարարական աշխատանքները։ Պա մի ընդարձակ քառական հոյակապ շինություն է։ Գործարանի գլխավոր շենքը, իմազես նաև օժանդակ արտադրական շենք։ Իրենց գոյությամբ վճռականորեն հերքում են արտադրական ձեռնարկությունների մասին եղած այն հին պատկերացումը, թե դրամի ընդհանրապես զուրկ են ճարտարապետական ձևավորումից, միատեսակ են ու անճաշակ։

Կողցակի նոր գործարանի շենքերը դիտողներ հրճվանք են պատճառում ճարտարապետական ձևերի բազմանակությամբ, մանրամասների կերտման հրմտությամբ, երեսամաման նյութերի գեղեցկությամբ։ Գործարանին կից կառուցվում է եռահարկ բնակելի շենք՝ բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների համար։ Լուրջ ուշադրություն է դարձ-

վում մերձգործարանային և ներդրողարանային ճանապարհների շինարարության, գործարանի տերիտորիայի բարեկարգման ու կանաչապատման վրա։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ կԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ. — Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանում ծավալվում է նոր Մատենադարանի շինարարությունը։

Մատենադարանը աշխարհի խոշոր թանգարաններից մեկն է, հայ ազգային կուլտուրայի գանձարանը։ Դարերի խորքից մեզ հասած թանկարժեք ձեռագրերը բացառիկ կարեոր նշանակություն ունեն ո՛չ միայն հայ ժողովրդի պատմության, այլև վրաց, աղբբեշանական և դրացի այլ ժողովրդների պատմության ուսումնակիրման համար։

Մատենադարանի նոր շենքը՝ ընթերցարանով և գիտական կարիքնետներով, ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմանները՝ միայն ձեռագրերի պահպանման, այլև նրանց էլ ավելի խորը ուսումնասիրման համար։ Շինարարության վրա ծախսված է երկու ու կես միլիոն սուրբի Հիմնականում, արդեն ավարտված են հողային և քարային աշխատանքները։ Պուած է ամբողջ շենքի հիմքը և բարձրացված են շենքի ձախիք հարկերը։

ՀԱՅՖԻԼՀԱՐՄՈՒՆԻՅԱՅԻ ՀԱՅՄԵՐԴԱՅԻՆ. — ԴԱՅԼԻՆԻ Շինարարությունը. — Երևանի Օպերայի և բարեկապ հոյակապ շենքը սոցիալիստական Երևանի հպարտություն ու զարդարանքն է։ Այժմ շենքի հյուսիսային մասում, ճարտարապետ Գ. Թամանյանի ղեկավարությամբ, տարվում է Հայֆիլհարմունիայի համար, մասրում է Հայֆիլհարմունիայի համար։ Դաշտի գինեկործական շինությունը մասին եղած այն հին պատկերացումը թե դրամի ընդհանրապես զուրկ են ճարտարապետական ձևավորումից, միատեսակ են ու անճաշակ։

Նոր պարտերում, երկու շարահարկերում (յարուս) և երեսուներկու օթյակներում պետք է տեղավորվի 1.400 աթոռ։ Բնեմ այնքան ընդարձակ է, որ ազատ կարող է տեղավորել ամենաբազմամարդ գեղարվեստական կողեկանիների։ Կան բազմաթիվ սենյակներ գերասանների համար, օճանդակ շենքեր, ընդարձակ զբոսարան և այլն։

Շինարարները լուրջ ուշագրություն են դարձնում օդափոխության, շնուրուցման և լուսավորության հարմարանքների սարքավորման վրա։

Համերգային դաշտին սարքավորման համար օդտաքործվում են մարմար, բարձրարակ ծեփ, գեղարվանդակներ և այլն։

ՓՏԸԱՅՈՒՆԱԿԱՆ ՆՈՐ ԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Նյումերեցանի շրջանը ունի պտղարուծության լայն ճանապարհություններ։ Վերջին տարիներում այստեղ կազմակերպվել են մերձարևագրածային կուլտուրաների սովորողներ (պետական տնտեսություններ), կամ-

բալուի ձիթապտղի սովորող մինչև 1955 թիվը պետք է կատարի ձիթապտղի ծառաւանկում 900 հեկտար տարածության վրա։ Հարյուրավոր հեկտարների վրա պետք է կատարվեն սերկնիլի, թղենու, կոնենու, ըն-

կուգենու ժառատնկումների Սովորովի գոյության երկու տարվա ընթացքում արդեն տնկվել են թուղի ծառեր՝ 34 հեկտար, նույն՝ 57 հեկտար, սերկել՝ 22 հեկտար, ընկույզնի՝ 33 հեկտար Ստեղծված են տնկարաններ, որոնք կապահովեն սովորովի պահանջները նորատունկ այդիների ոռոգման համար կառուցվել ու օգտագործման է հանձնվել շրջան կայան, որը պետք է ապահովի 400 հեկտար այդիների ոռոգումը:

Մարտունու շրջանի Սովորնար գոյուղի մոտի «Արարատ» արեստի այգե-տնկարանի փորձը ցուց տվեց, որ Մարտունու շրջանի շատ կոլտնտեսություններ կարող են մեծ հաջողությունների հասնել պաղարուծության ասպարեզում: Այդ այգե-տնկարանը ունի 37

հեկտար տարածություն և տնկիներ է մատակարարում շրջանի կոլեկտիվ տնտեսություններին, Սովորնար, Աստղածոյ, Վերին Գետաշեն, Չորագյուղ գյուղերում արագ թափով զարգանում է պաղարուծությունը:

Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության միջնառության կուսական հաստատեց պամիգորի և սեխի նոր տեսակների Պամիգորի «Երևանի» տեսակը աշխի է ընկնում բարձր բերբատվությամբ: Իր համբ որակով շերազանցում է ուսապուրիկայում անցնողը բռնու տեսակներին: Մ. Ղազարյանի ստացած սեխի «Մասիս» տեսակը ունի բարձր շաբարայնություն և հանդիսանում է որակյալ հոմբ պահածոների արտադրության համար: Այդ տեսակի միջն բերբատվությունը հեկտարից 281 ցենտուներ է:

ԿՈՒՏՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ՆՈՐ ԳՐԱԴԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱԿՈՒՄՐՈՒՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ:— Տարեցտարի ավելանում է մեր սեսուուրիկայի գրադարանների, ակումբների և կուլտուր-լուսավորական այլ օշախների ցանցը: Հայկական ՍՍՌ Մինիստրերի Սովետին կից Կուլտուր-լուսավորական հիմնարկների կոմիտեն այս տարի բացելու քաղաքային երկու գրադարան, որոնցից մեջը Ալավերդում, Մյուաք Կիրովականում, Կիրովականի շըրշանի ժդանով և Համզալիման գյուղերում կրացվելի մանկական գրադարաններ, որոնք հիմնարկնում սպասարկելու են դպրոցական հասակի ընթերցողներին, Ազգագենովի, Ալավերդու, Ապարանի, Արթիկի, Ախուրյանի, Խշանի և այլ շրջաններում բացվելու են գյուղական 16 գրադարանների: Քաղաքային և գյուղական գրադարանների գրքերի քանակը այս տարի ավելացել է 700.000 օրինակով:

Գյուղական նոր ակումբներ և կուլտուրայի տներ են կազմակերպվում Ազգերեկովի, Կիրովականի, Ղաֆանի, Նոյեմբերյանի և Սփյանի շրջաններում:

Նախատեսված է հայ նշանալոր բանաստեղծ Ս. Շահազդի ծննդավայրում՝ Աշտարակ գյուղում կազմակերպել տուն-թանգարան, ուր հավաքվելու են այն խոշոր էքսպոնատները (ցուցանությունները), որոնք արտացոլում են բանաստեղծի կյանքը ու գրական գործունեությունը:

ԱՊԱՐԱՆՈՒՄ:— Տարեցտարի ավելանում է Ապարանի շրջանի բուժական հիմնարկների թիվը: 1951 թվի

ընթացքում այստեղ կառուցվել է հիմնադանոցի շենք, բացվել են երկու բժշկական և չորս բուժակալին կետեր: Հիմնադանոցը տեղավորված է լուսավոր ընդուրածակ շենքում և ունի ունտգենյան և այլ կարիքներու քուշակ, Ալագյազ և Մաղկահովիտ գյուղերի բժշկական տեղամասերին կից գործում են մանկական և կանանց կոմունացիաների Շշահուում աշխատում են բազմաթիվ բժշկների: Նրանք կոլեկտիվ տնտեսությունների համար հաճախակի զեկուցումներ են կարդում սանիտարա-լուսավորական թեմաներով:

ԿՈՒՏՏՈՒՐԱԿԱՆՆԵՐԸ ՍՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:— Արզնի կուրորտում (բուժավայր) սկսվեց ձմեռային սեղանը: Կուտանսականները կորորտում կազմում են բուժվողների 3/4-ը: Մինչև գարնանային դաշտավայրին աշխատանքների սկսվելը կրուժվեն 400 կուտանսականներ՝ Արտաշատից, Հոկտեմբերյանից, Եղիշեածնից, Զանգիբրաստից և ուսապուրիկայի այլ շրջաններից:

ԿՈՒՏՏՈՒՐԱԿԱՆՆԵՐՆ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ:— Հայաստանի շատ կովառիները առանց արտադրությունից կորվելու ստանում են բժարագույն կրթություն: Վերջերս ավարտվեց Երևանի Զոռվան ինստիտուտի զոռատեխնիկական ֆակուլտետի հնուական բաժնի նոր ընդունելությունը, ընդունվել են 100 մարդ, որոնց մեջ՝ կոլիսովի նախագահը, Քերմայի վարչները, ՄՏԿ-ի աշխատողները, զոտականիները՝ Ստեփանավանի, Կալինինոյի, Նոր Բայազետի և ուրիշ շրջաններից:

ԱԲՎԵՍ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ:— Հունվարի 14-ին Հայաստանի սովետական գրողների միության քարտուղարության, արձակագիրների սեղիցիայի և ԱՍՊԿԵտական գրականություն և արվեստ ամսագրի խմբագրական կունգիայի միացյալ ընդլայնված նիստում քննարկվեց Հրաշյա Քոչարի «Մասիս» տան զավակները անտակ վեպի 1-ին մասը Թննարկմանը ներկա էին գրողներ և քննարկաներ Թննարկման արդյունքներն ամփոփեց Գ. Բորյանը:

Վեպը գնահատվեց որպես նվաճում սովետակայի հետապատճենվյան արձակություն:

ՍԿՈՆԱԿ ԳՐՈՂԻ ՎԵՓԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ:— Հայաստանի սովետական գրողների միության քարտուղարության և արձակագիրների սեղիցիայի համատեղ նիստում քննարկվեց Հայրենազարդ Ստ. Ալաշաշյանի «Անապատում» անտակ վեպը: Քննարկմանը մասնակցեցին Թր. Թափալյանը, Հր. Քոչարը, Վ. Մանցականյանը, Գր. Քեշիշյանը, Գ. Բորյանը և ուրիշները: Քննարկ-

ման ընթացքում նշվեց, որ «Անապատում վեպով Ստ. Ալաշաշյանը հրապարակ է գալիս իրեն շնորհաւում՝ երիտասարդ արձակագիր; Հեղինակի ուղարկությունը հրավերվեց նաև վեպում տեղ գտած մի շաբթ թերությունների վրա:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության թանգարանի ազգագրական բաժինը ավարտն հայկական ժողովրդական խաղերի հավաքման աշխատանքները նյութը հավաքել են Հայաստանի համարյա բոլոր շրջաններից, ինչպես նաև Վրաստանից ու Ադրբեյջանից: Բաժնի աշխատակիցները հավաքել են ժողովրդական խաղերի մոտ 500 տեսակ՝ իրենց տարբերակներով: Դրանք, ըստ իրենց բնույթի, սպորտային, շարժումնային, կենցաղային խաղեր են: Նրանց ընթամանությունը, ըստ պատմական փառաթքերի հիշատակումների, վերաբերվում են հին շրջանին և միջնադարին: Առանձնապես հետաքրքրացրած են սպորտային և շարժումնային խաղեր:

ԳՐԹԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ.— Մրանիկյանի անվան Պետական համբային գրադարանի շենքում տեղավորված է Հայկական ՍՍՌ գրքերի պալատը՝ հիմնադրված 1922 թվին, Այստեղ տարվում է ուսապուրիկացում հրատարակվող բոլոր գրքերի, թերթերի, ամսագրերի նկարագրության և համակարգման աշխատանք: Գրքերի պալատի տվյալներով, սովորական իշխանության տարբերակներին Հայաստանում լույս է ընծայվել 14 հազար հրատարակություն՝ 70 միլիոն օրինակով:

1925 թվից հրատարակվում էին գրքային տարեգրություններ՝ հայերեն և ռուսերեն, ինչպես նաև՝ լրագրային և ամսագրային հոդվածների տարեգրություններ: Լույս է տեսել հայ գրականության թիրլիոգրաֆիա 2 հատորով: Տպագրության պատրաստ է նաև 3-րդ հատորը: Գրքերի պալատը հրատարակությունների փոխանակություն է կատարում ՍՍՌ բոլոր խոշոր գրադարանների հետ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 1952 ԹՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Այս տարի Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան լույս է ընթայելու հայերեն և ռուսերեն մոտ 100 գիտական աշխատություններ, բոլոր հրատարակությունների ընդհանուր տիրածը (տպաքանակ) կկազմի մոտ 200 հազար օրինակի:

Ֆիզիո-մաթեմատիկական, բնական, տեխնիկական, բիոլոգիական և գյուղատնտեսական գիտությունների ուղղությամբ պետք է հրատարակվեն մի

շարք հետաքրքրի աշխատություններ, որոնց մեջ «Բուրականի աստղադիտարանի հաղորդագրություններ», «Սևանի հիմնորդիոլոգիական կայանի աշխատանքներ» և այլն: Ակադեմիայի հրատարակության պլանի մեջ մեծ տեղ են գրավում հասարակական գիտություններին նվիրված աշխատությունները:

Լույս կտեսնեն մի շաբթ աշխատություններ՝ նվիրված Հայաստանի պատմությանը, սովորական գրականությանը, լեզվաբանությանը և գիտության այլ ճյուղերի:

Գ. ՍՊՈՒՆԴՈՒԿՑԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱ-ՍՈՒՆ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությունը լույս է ընծայել Գ. Սոնդուկցյանի երկերի բառահատոր լիակատար ժողովածվի 2-րդ հատորը: Բնագիրն ու ծանոթագրությունները պատրաստել է Գիլորդիական գիտությունների թեկնածու Ռ. Զարյանը: Այդ հատորում հրատարակված են Սոնդուկյանի դրամատիկական ստեղծագործություններ՝ «Փեպոն», «Քանդած օչախ», «Ամուախնները», «Բաղնիք բողան», նաև «Ամուախններ» դրամայի տարբերակները: Գրքը պատկերազարդ է և ունի անվանական բառապան: Գրքի ձեւագործը կատարել է նկարիչ Կ. Տիրատուրյանը: Խմբագիրն է Գիլորդիական գիտությունների գոկտոր:

ՀՈԹԵԼԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐ.— Լենինականի պետական դրամատիկական թատրոնում կայացալ Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասան Արմեն Արմենյանի ծննդյան 80-ամյակին և բնական գործունեության 60-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր երեկո:

Լենինականի աշխատավորության և ուսապուրիկայի թատերական հասարակության ներկայացուցիչները շնորհուել ուղղությամբ հոբելյարին: Հոբելյարի բնական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ժողովրդական դերասան Ա. Հարությունյանը:

ՈՂՋԿԱՆ ՀԵԿԱՆ ՀԵԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻ-ՆԻՒՄԻՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԱՐԵՎԱՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐ-ՉՈՒԹՅԱՆ և Հայ Թատերական հասարակայնության կողմից ժողովրդական դերասան Գ. Զանիբեկյանը, Թիրլիսիի հայկական թատրոնի կուեկտիվի կողմից Վրացական ՍՍՌ ժողովրդական դերասանուհի Մ. Մողորյանը:

Իր պատասխան խոսքում Արմենյանը շերմ շնորհալություն հայտնեց բուշկեկյան պարտիային և սովորական կառավարությանը՝ արվեստի աշխատողների նկատմամբ ցուցադրելով հոգատարության համար: Վերջում ցուցադրվեց Պուշկինի «Ժման» առաքետի 2-րդ գործողությունը, որտեղ բարոնի գերու կատարում էր ժողովրդական արտիստ Արմենյանը:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

ՈՒՍՈՒՑԻՉՉՈՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ.— Նոյեմբերի 1-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նիստերի դաշինությամբ, մանկավարժական ասպարեզում կատարած բազմամյա և անբասիր աշխատանքի համար կառավարական պարգևներ ստացան ուսապուրիկայի

բոլոր բաղադրիչներից ու շրջաններից բազմաթիվ ուսուցիչների:

Հանդիսավոր իրադրության մեջ, Հայկական ՍՍՌ Գրքագույն Սովետի Նախագահության Նախագահ Մ. Պապյանը լենինի շքանշաններ հանձնեց բազմաթիվ ուսուցիչների: Այդ օրը լենինի շքանշաններ հանձնվեցին

21 ուսուցչի, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաներ՝ 21 և «Պատվո նշան» շքանշաններ՝ 59 ուսուցչի, «Աշխատանքային արիության համար» և «Աշխատանքային գերազանցության համար» մեղաներ ստացալ 282 մարդ:

Պարգևատրվածների անունից ելույթ ունեցողները շնորհակալություն հայտնեցին կառավարության՝ ուսուցչների նկատմամբ ցուցց արված հոգածության համար և խոստացան հետագայում ևս ավելի խղճացությեն աշխատել նոր սերնդի գաստիարակության համար:

Վեջում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Մ. Պապյանը շնորհավորեց պարգևատրվածներին և նրանց ցանկացավ հետագա հաջողություններու:

Նոյեմբերի սկզբին, Լենինականի քաղաքության նիստերի դաշտին օտար Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Մ. Պապյանը շքանշաններ և մեղաներ հանձնեց Լենինական քաղաքի, Արքիկի և Ախուրյանի շրջանների մի խումբ ուսուցիչների, որոնք պարգևատրվել են երկարամյա և անբարսի աշխատանքի համար:

Լենինի շքանշան ստացավ 2 ուսուցիչ, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան՝ 6, «Պատվո նշան» շքանշան՝ 13, «Աշխատանքային արիության համար» մեղալ՝ 19 և «Աշխատանքային գերազանցության համար» մեղալ՝ 58 ուսուցիչ:

Լենինականի Կիրովի անվան դպրոցի ուսուցչունի Աստղիկ Բագրայանը պարգևատրվածների անունից շնորհակալություն հայտնեց սովետական կառավարությանը բարձր պարգև համար:

Վեջում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Մ. Պապյանը շնորհավորեց պարգևատրվածներին և նրանց ցանկացավ նոր հաջողություններու:

ԱՐԵՎԵՆԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՎԻ ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀԱԿԻՄ. — Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1952 թվի հունվարի 3-ի Հրամանագրով Հայկական ՍՍՌ արիստի վաստակավոր գործի կոչում է շնորհվել գեղարվեստական ինքնագործություններին զեկավարներ Վ. Բոնիաթյանին, Ք. Երանոսյանին, ի. Կղարթմյանին, Ա. Մանուկյանին և Ա. Ներսիսյանին: Գեղարվեստական ինքնագործություններին մի շարք կոլեկտիվներ, կոլեկտիվների զեկավարներ և առանձին մասնակիցներ պարգևատրվել են Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրերով:

Երեկանի Ս. Մ. Կիրովի Անկան ԳՈՐԾԱՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ. — ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերության մինիստրությունը և ՀԱՄԿԽ-ը Երևանի Կիրովի անվան գործարանի անձնակազմին արժանացրել են Համամելիթենական երկրորդ կարգի մրցանակի և գրամական պարգևատրման:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՎԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ. — ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով, Կիրովի անվան, Կարբիդի և Ավոգոդրովի գործարանների մի խումբ աշխատողներ երկարամյա ու անբասիր աշխատանքի համար պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով: Կարբիդի գործարանից Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան է ստացել 4 մարդ, «Աշխատանքային արիության համար» մեդալի է արժանացել 14 մարդ և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալի՝ 13 մարդ: Կիրովի անվան գործարանից շքանշաններով պարգևատրվել է 81 մարդ: Երևանի Ավտոդրովով գործարանից մեդալներով պարգևատրվել է 22 մարդ:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԶՄԱՋԱՎԱԿԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ. — Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1951 թվականի հունվարի 3-ի Հրամանագրով Երևան քաղաքի Միկոյանի, Մոլոտովյան, Կիրովյան և Սպանդարյանի շքանշանների մի շարք մայրեր պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով: Խնդ երեխա ծնած և գաստիարակած 2 մարդ ստացել է «Մայրական փառք» 1-ին աստիճանի շքանշան, յոթ երեխա ծնած և գաստիարակած 8 մարդ՝ «Մայրական փառք» 3-րդ աստիճանի շքանշան, վեց երեխա ծնած և գաստիարակած 18 մարդ՝ «Մայրության մեդալ» 1-ին աստիճանի մեդալ, հինգ երեխա ծնած և գաստիարակած 17 մարդ՝ «Մայրության մեդալ» 2-րդ աստիճանի մեդալ:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1951 թվականի նոյեմբերի 13-ի Հրամանագրով Երևան քաղաքի Մատինյան, Մոլոտովյան, Կիրովյան և Սպանդարյանի շքանշանների մի շարք մայրեր պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով: Խնդ երեխա ծնած և գաստիարակած 1 մարդ ստացել է «Մայրական փառք» 1-ին աստիճանի շքանշան, յոթ երեխա ծնած և գաստիարակած 2 մարդ՝ «Մայրական փառք» 2-րդ աստիճանի շքանշան, յոթ երեխա ծնած և գաստիարակած 6 մարդ՝ «Մայրական փառք» 3-րդ աստիճանի շքանշան, վեց երեխա ծնած և գաստիարակած 25 մարդ՝ «Մայրության մեդալ» 1-ին աստիճանի մեդալ, հինգ երեխա ծնած և գաստիարակած 41 մարդ՝ «Մայրության մեդալ» 2-րդ աստիճանի մեդալ:

